Տարեկան հաշվետվություն
2024

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» խորհրդատվական հասարակական կազմակերպություն է, որի առաքելությունն է բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը, խթանել քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին և նպաստել ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը: Մենք համոզված ենք, որ պետական և հանրային նշանակություն ունեցող ոլորտներում հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական և անբաժանելի բաղադրիչն է:

«Իրազեկ քաղաքացիների միավորումն» այս տարի ևս ակտիվորեն ներգրավված է ժողովրդավարական բարեփոխումների առաջ մղման գործում՝ ներառելով իրավապահ համակարգի, ընտրական, սահմանադրական, հակակոռուպցիոն և պետական գնումների ոլորտները: Կազմակերպությունը նպաստում է դրանց սահուն իրականացմանը և լայն հանրությանը հասանելի դարձնելուն:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» հետազոտություններն ու հրապարակումները վերաբերում են արտաքին քաղաքականությանը, ժողովրդավարությանը, տնտեսությանը, անվտանգությանը, ընտրական գործընթացներին և քաղաքացիների իրավունքներին: Մենք աջակցում ենք նաև Հայաստանում լրագրողական դաշտի հզորացմանը և իրականացնում լրատվական գործունեություն «Փաստերի ստուգման հարթակի» միջոցով, որը պայքարում է ապատեղեկատվության և քարոզչության դեմ՝ տրամադրելով հանրությանը վստահելի և ստուգված տեղեկատվություն:

Կազմակերպությունն իր գործընկերների հետ համատեղ ակտիվորեն ներգրավված է ընտրական գործընթացներում՝ իրականացնելով դիտորդական առաքելություններ, հանրային իրազեկման արշավներ և կրթական ծրագրեր: Մեր ջանքերը միտված են արդար, թափանցիկ և վստահելի ընտրական միջավայրի ապահովմանը:

2024 թվականը կազմակերպության համար եղել է կայունության և նորարարության շարունակական տարի: Սույն տարեկան հաշվետվությամբ ներկայացնում ենք մեր կատարած աշխատանքները, այդ թվում՝ գործընկերների և աջակիցների հետ համատեղ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Անձնակազմ
- Գործընկերներ
- Գործունեություն
- Ֆինանսավորում

ԱՆՁՆԱԿԱԶՄ

Մուշեղյան Աշխեն
Գործադիր տնօրեն

Իոաննիսյան Դանիել
Ծրագրերի համակարգող

Ղազարյան Լիլիթ
Գործադիր օգնական

Մուսյուկ Լիլիթ
Գործադիր օգնական

Աղաբեկյան Վաղարշ
Իրավապահ համակարգի փորձագետ

Սերգոյան Արտաշես
Հետազոտող / բարեփոխումների խորհրդատու

Ավագիմյան Ռուզաննա
Իրավաբան / իրավախորհրդատու

Պետրոսյան Փիրուզա
Ծրագրի օգնական / ֆոնդահայթայթման մասնագետ

Ղազարյան Սևադա
Գնումների մոնիթորինգի մասնագետ

Մանուկյան Անժելա
Ծրագրի պատասխանատու

Ղուկասյան Վահե
Խմբագիր

Հարությունյան Շուշան
Թարգմանիչ / կայքերի թողարկիչ

Գրիգորյան Խորեն
Վիդեոմոնտաժող / օպերատոր

Մարտիրյան Մանե
Թվային մարքեթինգի մասնագետ

Համբարձումյան Հասմիկ
Գլխավոր խմբագիր-համակարգող

Մանասյան Նանե
Լրագրող

Համբարձումյան Սուզաննա
Լրագրող

Հովհաննիսյան Արփինե
Լրագրող

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

NED NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY
SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՄՆԱԴՐԱՄ

UK International Development
Partnership | Progress | Prosperity

UNITED STATES EMBASSY YEREVAN

ԱՇԿԱՒԽ ԴԻՏՈՐԴ

Freedom House

THE EUROPEAN UNION FOR ARMENIA

OPEN INFORMATION PARTNERSHIP

ՀԼԱ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB

AMBASSADE DE FRANCE AU BRÉSIL
Liberté
Égalité
Fraternité

ԱՔՀԿ

Internews

«ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ» 10 ՏԱՐԵԿԱՆ Է

«Իրազեկ քաղաքացիների միավորումն» ապրիլի 5-ին տոնեց իր 10-ամյակը: Հոբելյանական միջոցառմանը ներկա էին գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ, դեսպաններ ու այլ դիվանագիտական ներկայացուցիչներ, ինչպես նաև կազմակերպության նախկին ու ներկա աշխատակիցներ:

Այս տարիների ընթացքում կազմակերպությունը ժողովրդավարության կայացմանն ուղղված ակտիվ գործունեություն է ծավալել մի շարք ուղղություններով՝

- հանրային իրազեկում,
- ընտրական գործընթացներ,
- բարեփոխումների առաջմղում և հանրայնացում,
- ապատեղեկատվության դեմ պայքար և մեդիագրագիտություն,
- լրագրողների կարողությունների զարգացում,
- պետական գնումներ,
- տեղեկատվության ազատություն և այլն:

Կազմակերպությունը վերահաստատում է Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ աշխատելու իր պատրաստակամությունը:

«ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿԻ» (FIP.AM) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականին **«Փաստերի ստուգման հարթակը»** շարունակել է իր գործունեությունը՝ հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ բացահայտել ապատեղեկատվությունը, կեղծիքը և մանիպուլյացիան: Տարվա ընթացքում FIP.am-ը մանրադիտակի տակ է պահել ինչպես Կառավարության և պետական մարմինների գործունեությունը, այնպես էլ հայաստանյան ու միջազգային լրատվադաշտը:

2024 թվականին «Փաստերի ստուգման հարթակը» հրապարակել է 317 հոդված՝ միջինն ամսական ավելի քան 20 նյութ: Դրանց գերակշիռ մասը եղել են փաստերի ստուգումներ, որոնց շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ռուսական քարոզչական թեզերի և ապատեղեկատվության բացահայտմանը: Բացի այդ, հրապարակվել են վերլուծական և բացատրական հոդվածներ, տեսանյութեր, որոնք վերահրապարակվել են այլ լրատվամիջոցների կողմից:

Հրապարակումների թեմատիկան հիմնականում ընդգրկել է արտաքին և ներքին քաղաքական գործընթացները, տարածաշրջանային (առավելապես ռուսական) ապատեղեկատվության մոնիտորինգը, հանրային շահ ներկայացնող խնդիրները՝ կրթության, առողջապահության և ենթակառուցվածքների ոլորտներում, պետական գնումների վերահսկողությունը: Իրականացվել են հետաքննություններ՝ պարզելու Կառավարության ծրագրերի իրականացման ընթացքը, պետական գնումների թափանցիկությունը և Հայաստանի դեմ իրականացվող հիբրիդային արշավներում ներգրավված անձանց շրջանակը:

Ինչ մեթոդներով է համալրվում ՌԴ բանակը. Պուտինի հայտարարությունների հետքերով

11:50, 18 ԴԿՏ, 2024

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը դեկտեմբերի 16-ին երկրի Պաշտպանության նախարարության կոլեգիայի նիստին, ի թիվս...

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Որքան է մեքենաների ու վարելու իրավունք ունեցողների թիվը Հայաստանում

16:43, 16 ԴԿՏ, 2024

«Փաստերի ստուգման հարթակը», կարևորելով ընթերցողի հետ կապը, ընթերցողներից մեկի խնդրանքով անդրադարձել է Հայաստանում...

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Ինչո՞ւ Երևանի քաղաքապետարանը չի նորոգել խոստացված փողոցները

15:44, 16 ԴԿՏ, 2024

Դեկտեմբերի 5-ին Երևանի քաղաքապետարանը տեսանյութ էր հրապարակել, ըստ որի՝ 2024-ի ծրագրով միջի...

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Սիսակ Գաբրիելյանի՝ անհուսալի վարկերի մարման մասին պնդումը առնվազն 43,600 անձի մասով ճիշտ չէ

19:16, 14 ԴԿՏ, 2024

Դեկտեմբերի 12-ին ՀՀ կառավարությունը հաստատեց անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական խթանմանն ուղղված...

2024 թվականին FIP.am կայքի այցելությունների ընդհանուր թիվը գերազանցեց 1.2 միլիոնը, որից 292 հազարը կազմել են ակտիվ օգտատերերը (տվյալները՝ Google Analytics-ից): Տարվա ամենաշատ ընթերցված նյութի դիտումներն անցել են 60 հազարը:

Հարթակի ներկայությունը սոցիալական մեդիայում 2024 թվականին շարունակեց աճել. տարվա ավարտին Facebook սոցիալական ցանցն ուներ 24,410 հետևորդ, Telegram ալիքը՝ 1,297, YouTube ալիքը՝ 2300 բաժանորդ: FIP.am-ը շարունակել է ակտիվ աշխատել նաև Instagram-ում և X-ում:

2024 թվականին FIP.am-ը շարունակել է իր գործունեությունը ոչ միայն հայկական տեղեկատվական դաշտում, այլև միջազգային հարթակներում: Տարվա ընթացքում հարթակը մասնակցել է տարածաշրջանային և միջազգային քննարկումներին՝ կենտրոնանալով ապատեղեկատվության դեմ պայքարի և մեդիագրագիտության զարգացման վրա: Հետևել է միջազգային փաստերի ստուգման լավագույն փորձին և ձեռնարկել նախապատրաստական քայլեր՝ անդամակցելու միջազգային պրոֆեսիոնալների ցանցերին: Այս գործընթացները կանխորոշեցին 2025 թվականին FIP.am-ի պաշտոնական անդամակցությունը միջազգային առաջատար նախաձեռնություններին: 2024 թվականը դարձավ միջազգային ինտեգրման և համագործակցության նախապատրաստական փուլ:

Լեռնային Ղարաբաղից բռնագաղթած մի խումբ լրագրողներ ուսումնառություն են անցել «Փաստերի ստուգման հարթակում»: Նրանք ծանոթացել են տեղեկությունները ստուգելու, փաստեր հավաքելու հիմնական գործիքներին, բաց աղբյուրների օգտագործմանը և ձեռք բերել փաստերի ստուգման հմտություններ: Երկու լրագրող հնարավորություն են ստացել համագործակցել հարթակի հետ որպես լրագրող:

Միևնույն ժամանակ, 2024 թվականի ընթացքում հարթակը բախվել է մի շարք մարտահրավերների, այդ թվում՝ ֆինանսավորման սահմանափակումների, դրամահավաքի կազմակերպման անհրաժեշտության, տեղեկատվական հոսքերի աճի և ֆեյք էջերի ակտիվացման:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Կազմակերպությունն այս տարի ևս շարունակել է ակտիվ ու բազմաբնույթ մասնակցությունը բարեփոխումների գործընթացներին՝ նպաստելով դրանց սահուն իրականացմանը, հանրային իրազեկվածության բարձրացմանը և բարեփոխումների օրակարգը լայն հանրությանը հասանելի դարձնելուն: Ներգրավվածությունն ընդգրկել է մասնակցություն կոլեգիալ մարմինների աշխատանքներին, աշխատանքային հանդիպումներ, այցեր պետական կառույցներ, քննարկումներ գործընկերների ու ոլորտային դերակատարների հետ, ինչպես նաև լրագրողների թեմատիկ վերապատրաստումներ և ավագ դպրոցի աշակերտների ներգրավում հասարակագիտության դասընթացների շրջանակում:

- **Ոստիկանություն**

Պայմանավորված ուժային կառույցներում նոր նշանակումներով և բարեփոխումներն առաջ մղելու պատրաստակամություն ցուցաբերող նախարարների հետ կառուցողական համագործակցությամբ՝ կազմակերպությունը ներգրավվել է մի շարք մարմիններում, այդ թվում՝

- Ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհուրդում,
- ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդում,
- ՆԳՆ կրթահամալիրի կադրերի ընտրության հարցազրույցների հանձնաժողովում,
- Ոստիկանության կարգապահական հանձնաժողովում:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» մասնակցել է ոստիկանության ծառայողների ատեստավորմանը և բարձրաստիճան ոստիկանների բարեվարքության հարցազրույցներին: Ատեստավորում է անցել 2930 ոստիկան, բարեվարքության հարցազրույցի մասնակցել 40 բարձրաստիճան ոստիկան: Հարցազրույցների ընթացքում հայտնաբերվել են ոստիկանության ծառայողների ապօրինի հարստացման դեպքեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են հաղորդումներ և հարուցվել քրեական գործեր:

2024 թվականին կազմակերպությունը մասնակցել է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման և բարեփոխումների ընթացքի քննարկումներին, ինչպես նաև ներգրավվել է Ոստիկանության բարեփոխումների 2024-2027 թվականների ռազմավարության մշակման գործընթացում՝ ներդրում ունենալով փաստաթղթի վերջնական տեսքի ձևավորման մեջ:

• Սահմանադրական

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» տարիներ շարունակ հակված է եղել այն մոտեցմանը, որ Հայաստանին անհրաժեշտ է ոչ թե սահմանադրական փոփոխություններ, այլ նոր սահմանադրություն, քանի որ ժողովրդի կողմից սահմանադրության ընդունումը կխթանի պատասխանատու և պահանջատեր հասարակության ձևավորմանը: Այս մոտեցումը որդեգրել ենք դեռևս 2020 թվականի սկզբից, երբ ընդգրկվեցինք Սահմանադրական բարեփոխումների առաջին մարմնի կազմում:

Հաշվետու տարում շարունակել ենք ակտիվորեն մասնակցել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի աշխատանքներին՝ ներկայացնելով մեր դիրքորոշումը մի շարք հիմնարար առաջարկների վերաբերյալ և հանձնաժողովին տրամադրելով նաև սեփական նախաձեռնություններով մշակված կարգավորումներ: Բացի այդ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի գործընկերների հետ միասին առաջարկել ենք Սահմանադրությունից հանել «կայուն մեծամասնության» վիճահարույց դրույթը և այդ փոփոխությունը առանձնացնել ընդհանուր բարեփոխումների փաթեթից՝ առաջարկելով Կառավարությանը ներկայացնել համապատասխան նախագիծ Ազգային ժողով: Առաջարկը, սակայն, մերժվել է խորհրդի անդամների մեծամասնության քվեարկությամբ:

Սահմանադրական բարեփոխումների գործընթացի վրա բացասաբար է անդրադառնում Սահմանադրության նախաբանը փոխելու Ադրբեջանի պահանջը, որը վերջինս ներկայացնում է որպես խաղաղության համաձայնագրի հիմնական խոչընդոտ:

2024 թվականին կազմակերպությունը մասնակցել է ՀՀ վարչապետի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպմանը, որտեղ քննարկվել է Սահմանադրական խորհրդին կից մասնագիտական հանձնաժողովի կազմի վերանայման հարցը:



• Ընտրական

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» քաղաքացիական հասարակության գործընկերների հետ մասնակցել է քննարկմանը, որի նպատակն էր գնահատել վերջին երեք տարիների ընտրական բարեփոխումների ընթացքը և դրանց ազդեցությունը համակարգի զարգացման վրա:

Կազմակերպությունը մասնակցել է խորհրդարանական լսումներին՝ ՀՀ ընտրական օրենսգրքում և հարակից օրենքներում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ: Կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը ելույթ է ունեցել՝ առանձնացնելով կարևոր հարցեր, այդ թվում՝ ձայների վերահաշվարկի մեխանիզմը, ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում ընտրությունների հետաձգման կարգավորումները, ինչպես նաև կուսակցությունների ֆինանսավորման սահմանափակումները:

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական բարեփոխումների ընթացքը շարունակվում է, և մեր համոզմամբ՝ միայն հետևողական և համակարգված աշխատանքով կարելի է հասնել իրական, խորքային փոփոխությունների և կայուն արդյունքների:

Մասնակցությունը աշխատանքային խմբերի, խորհուրդների և հանձնաժողովների աշխատանքներին հնարավորություն է տալիս ոչ միայն խորքային ուսումնասիրել առկա խնդիրները, այլև վեր հանել դրանք, քննարկել, ներկայացնել թիրախային լուծումներ, ինչպես նաև քվեարկության միջոցով ազդել որոշումների կայացման վրա:

- **Հակակոռուպցիոն**

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» ակտիվորեն ներգրավված է եղել Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնների համալրման ամբողջ գործընթացում՝ մասնակցելով 71 թեկնածուի հետ անցկացված հարցազրույցներին, 14 անձի բարեվարքության ստուգմանը և 18 ծառայողի ատեստավորմանը: Մեր կողմից ներկայացված մի շարք առաջարկներ քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում:

Հավաքագրելով և վերլուծելով տվյալներ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից ու ՀՀ դատախազությունից՝ կազմակերպությունն արձանագրել է, որ քաղաքացիները հանցագործությունների մասին հաղորդումներ ներկայացնում են միայն բացառիկ դեպքերում: Նույն պատկերն է արտացոլվում նաև Արդարադատության նախարարության www.azdararir.am հարթակի տվյալներում:

Խորհրդատվական հանդիպումներ և քննարկումներ ունենալով իրավապահ համակարգի ներկայացուցիչների (Հակակոռուպցիոն կոմիտե, Քննչական կոմիտե, Ոստիկանություն և այլն) և իրավապաշտպանների հետ՝ կազմակերպությունն առանձնացրել է իրավապահների հետ քաղաքացիների համագործակցության ոլորտում առկա հիմնական խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները: Խնդիրների կարգավորման համար մշակված առաջարկությունները ներկայացվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ և քննարկվել Հակակոռուպցիոն խորհրդի աշխատանքային խմբում, որի կազմում են ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ դատախազության և այլ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Այս խնդիրների վերաբերյալ խորհրդարանական լսումների ընթացքում ելույթով է հանդես եկել կազմակերպության ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունը ներգրավվել է նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընդունելության հանձնաժողովում, որտեղ հիմնական իրադարձությունները զարգացել են հաջորդող ժամանակաշրջանում:

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ

Կազմակերպությունը ՄԹ միջազգային զարգացման աջակցության շրջանակում Միացյալ Թագավորության կառավարության աջակցությամբ իրականացրեց «Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագիրը՝ միտված ՀՀ պետական գնումների համակարգի նկատմամբ հանրային վերահսկողության ուժեղացմանը և պետական գնումների թափանցիկության և հաշվետվողականության խթանմանը:

Ծրագրի շրջանակում իրականացվեց ՀՀ պետական գնումների համակարգի հետազոտություն, որի արդյունքների հիման վրա պատրաստվեցին հաշվետվություններ:

- Մեկնարկային հաշվետվությունը ներկայացրեց և վերլուծեց այն խնդիրները, որոնք վերաբերում են գնումների պլանավորմանը, գնումների ընթացակարգերին, ինչպես նաև պետական գնումների համակարգի այլ կոմպոնենտներին:
- Միջանկյալ հաշվետվությունն ուսումնասիրեց տեխնիկական բնութագրերի հետ կապված խնդիրները, գնումների իրականացումը, գնման պայմանագրերի կատարումը, թափանցիկությունը, ներքին հսկողությունը և այլն:
- Վերջնական հաշվետվությունը ներկայացրեց ծրագրի իրականացման ընթացքում կատարված աշխատանքները, ուսումնասիրությունների արդյունքները, եզրակացությունները և առաջարկությունները:

Ծրագրի շրջանակում կազմակերպվեց 1 սեմինար-քննարկում՝ լրագրողների և քաղհասարակության ներկայացուցիչների համար՝ «Պետական գնումների դաշտային վերահսկողություն» խորագրով:

Բանախոսությամբ հանդես եկան ՀՀ ֆինանսների փոխնախարար Ավագ Ավանեսյանը, ՖՆ Գնումների քաղաքականության վարչության պետ Սերգեյ Շահնազարյանը, ՊՎԾ Գնումների գործընթացների վերահսկողության վարչության պետ Կարեն Մնացականյանը, Քաղաքաշինության կոմիտեի Քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչության պետ Արսեն Միրզոյանը, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պայմանագրերի կառավարման ավագ մասնագետ Արտաշես Հովսեփյանը, Երևանի փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, հանրային ֆինանսների փորձագետ Արտակ Քյուրումյանը, ճանապարհաշինարարական ծրագրերի մասնագետ Բագրատ Բաղալյանը և այլոք:

Սեմինար-քննարկումների ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու պետական գնումների համակարգի առանձնահատկություններին, առկա խնդիրներին, վերահսկման մեխանիզմներին, ինչպես նաև ոլորտի դերակատարների հետ քննարկելու պետական գնումների հանրային վերահսկողության և թափանցիկության հետ կապված հարցերը, վերահսկման գործիքակազմն ընդլայնելու ուղիները:

Ծրագրի շրջանակում կազմակերպությունը տրամադրեց ենթադրամաշնորհներ լրատվամիջոցներին և մարզային հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և պետական գնումների վերահսկողության բարձրացման նպատակով:

Մրցույթի արդյունքում ընտրվեցին երեք կազմակերպություններ՝ «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ-ն («Երևան), «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ն (Լոռի) և «Դեղերի օգտագործման գիտական խումբ» ՀԿ-ն (Շիրակ):

Ծրագրի շրջանակում պատրաստվեցին հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված տեսանյութեր, որոնք պատմում էին պետական գնումների, դրանցում առկա ռիսկերի և հանրային միջոցների գրպանման, ՀԿ-ների և ԶԼՄ-ների վերահսկման հնարավորությունների և վերահսկման անհրաժեշտության մասին: Տեսանյութերն ունեցել են մոտ 4 մլն դիտում սոցիալական հարթակներում:

Տեսանյութերից զատ պատրաստվեցին և «Փաստերի ստուգման հարթակում» հրապարակվեցին 15 հետաքննական նյութեր՝ վեր հանելով պետական գնումների համակարգում առկա խնդիրները և բացահայտելով կոռուպցիոն ռիսկերը:

Կազմակերպության ջանքերով և ՀՀ Ֆինանսների նախարարության հետ համագործակցության շնորհիվ՝ 2024 թվականի մայիսի 23-ին ՀՀ կառավարության նիստում քննարկվեց և ընդունվեց ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը: Համաձայն այս փոփոխությունների՝ ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպութունների ներկայացուցիչների համար էապես պարզեցվեցին գնումների հանձնման-ընդունման գործընթացի վերահսկման մեխանիզմները, մասնավորապես,

- ստեղծվեց վերահսկող կազմակերպությունների ռեգիստր,
- հանվեց վերահսկողության նպատակով պատվիրատուին դիմելու ժամկետների սահմանափակումը,
- հանվեց յուրաքանչյուր անգամ փաստաթղթերի փաթեթի ներկայացման անհրաժեշտությունը,
- ավելացվեց շինարարության ընթացքում շինհրապարակներ այցելելու հնարավորությունը,
- տրվեց անարգել տեսալուսանկարահանելու և չափումներ իրականացնելու հնարավորություն,
- տրվեց հանձնման-ընդունման գործընթացին առանց նախապես զգուշացնելու ներկա գտնվելու հնարավորություն:

Կառավարության որոշման փոփոխության շնորհիվ կազմակերպությունը այցելեց տասյակ պետական հաստատություններ, ինչպիսիք են ԱԱԾ, ՀԱԷԿ, Երևանի ՋԷԿ, ՆԳՆ, Քննչական կոմիտե, կառուցվող դպրոցներ, մարզադահլիճներ և այլն՝ իրականացված գնումների վերահսկման նպատակով:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ

2022 թվականից ի վեր «Իրազեկ քաղաքացիների միավորումը» Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության հետ համատեղ կազմակերպում և անց է կացնում «Ժողովրդավարության հայկական ֆորումը»: Ժողովրդավարության ֆորումը հարթակ է պետության և քաղաքացիական հասարակության միջև՝ միասին վերլուծելու ժողովրդավարական զարգացման ճանապարհին առաջացող մարտահրավերները և դրանց դիմակայելու հնարավորությունները:

Հուլիսի 1-ին Երևանում կայացավ Ժողովրդավարության արդեն երրորդ ֆորումը, որի քննարկումներին մասնակցեցին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ-ում ԱՄՆ լիազոր և արտակարգ դեսպան Քրիստինա Քվինը, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը, Freedom House կազմակերպության Եվրոպայի և Եվրասիայի ծրագրերի տնօրեն Մարկ Բեհրենդտը, ինչպես նաև Հայաստանի գործադիր ու օրենսդիր մարմինների, դիվանագիտական կորպուսի, քաղաքացիական հասարակության, ԶԼՄ-երի շուրջ 200 ներկայացուցիչ:

Ֆորումի ընթացքում կայացան 5 պանելային քննարկումներ: Դրանցից առաջինն անդրադարձավ Հայաստանում ինստիտուցիոնալ ժողովրդավարություն հաստատելու կարևորությանը: Բանախոսները նաև քննարկեցին Հայաստանի առջև ծառացած ժողովրդավարական մարտահրավերները, մարդու իրավունքների խախտումները: Պանելային քննարկումներից հաջորդը նվիրված էր Հայաստանում մեդիա միջավայրի վրա ազդող գործոններին, որտեղ բարձրացվեց մեդիագրագիտության մակարդակի բարձրացման հարցը: Պանելային մյուս քննարկումը վերաբերում էր հայկական մեդիայի զարգացմանը, տեղական և միջազգային գործընկերների դերը այդ գործում: Հաջորդ պանելային քննարկումը նվիրված էր անվտանգության և ժողովրդավարության փոխկապակցվածության բացահայտմանը: Ֆորումի ավարտին, պանելային հինգերորդ քննարկմանը ներկայացվեց համատեղ զեկույց՝ «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղում հայեր չկան» խորագրով:

ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ/ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

- **«Արտաքին քաղաքականություն և լուսաբանում»**

Արտաքին քաղաքականության շուրջ մանիպուլյացիաների նվազեցմանը և օբյեկտիվ քննադատության ձևավորմանն են միտված տարիներ ի վեր կազմակերպվող և լրագրողների շրջանում մեծ համբավ վայելող «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում» սեմինար-քննարկումները: Սեմինարների շարքն արտաքին քաղաքականության շուրջ կարողությունների զարգացման հարթակ է լրագրողների (ինչպես նաև հանրային կարծիքի առաջատարների) համար, որն էական ազդեցություն է ունենում լրագրության որակի վրա և հնարավորություն ընձեռում Chatham House-ի կանոններով քննարկում ունենալ անմիջապես ոլորտային դերակատարների՝ նախարարների, դեսպանների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների հետ:

2024 թվականի ընթացքում «Իրազեկ քաղաքացիների միավորումը» կազմակերպեց 4 սեմինար քննարկում՝ նվիրված փոփոխվող աշխարհում խաղաղության հեռանկարներին, Հայաստանի արտաքին քաղաքական վեկտորին, դիվերսիֆիկացիային և դրա խնդիրներին, միջազգային զարգացումների ֆոնին Հայաստանի մարտահրավերներին:

Բանախոսությամբ հանդես եկան և մասնակիցների հարցերին պատասխանեցին ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, ՀՀ ԱԺ փոխնախագահ, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ Արմեն Ղազարյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, ԵՄ դեսպան Ն.Գ. Վասիլիս Մարագոսը, Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Սկվեչինսկին, Հայաստանում ԵՄ առաքելության ղեկավարի տեղակալ Մարեկ Կուբերսկին, ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի ղեկավար Աբգար Բուդաղյանը և այլոք:
Մասնակիցները հնարավորություն ունեցան խորքային պատկերացում կազմելու Հայաստանի արտաքին քաղաքական մարտահրավերների վերաբերյալ, ուղղելու իրենց հուզող հարցերն ու մտահոգությունները ոլորտի ներկայացուցիչներին, ինչպես նաև փոխանակելու իրենց փորձն արտաքին քաղաքականության լուսաբանման գործում:

- **«Հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքը»**

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» սեպտեմբերին կազմակերպեց «Հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքը Հայաստանում» խորագրով երկօրյա սեմինար-քննարկում՝ լրագրողների և հանրային կարծիքի առաջատարների համար:

Բանախոսությամբ հանդես եկան և մասնակիցների հարցերին պատասխանեցին ՀՀ արդարադատության փոխնախարար Կարեն Կարապետյանը, ՀՀ ֆինանսների փոխնախարար Ավագ Ավանեսյանը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Մարիամ Գալստյանը, գլխավոր դատախազի տեղակալ Սրբուհի Գալյանը, ինչպես նաև կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն «Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում» ծրագրի շրջանակում դեկտեմբերին 13-ին կազմակերպեց դասընթաց-քննարկում Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի աշակերտների համար՝ Ներքին գործերի նախարարությունում ընթացող բարեփոխումների վերաբերյալ: ՆԳՆ մամուլի քարտուղար, Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության պետ Նարեկ Սարգսյանը աշակերտներին և ուսուցիչներին ներկայացրեց բարեփոխումների ընթացքը և գրանցված արդյունքները:

Ծրագիրը նպատակ ունի իրազեկել հանրությանը տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ՝ կազմակերպելով նմանատիպ քննարկումներ հանրակրթական հաստատություններում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

2024 թվականի ընթացքում կազմակերպվեցին մի շարք հանրային քննարկումներ:

- «Էներգետիկայի դիվերսիֆիկացիայի հեռանկարները Հայաստանում» թեմայով քննարկմանը մասնակցեցին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, լրագրողներ ու փորձագետներ: Բանախոսեցին ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ծովինար Վարդանյանը և ԱՄՆ ՄԶԳ էներգետիկ անվտանգության ծրագրի ղեկավար Աբգար Բուդաղյանը:
- «Ոստիկանական բռնություններ. նոր ալիք, թե՞ հին ավանդույթներ» խորագրով քննարկմանը մասնակցեցին լրագրողներ, քաղաքացիական ակտիվիստներ ու ՆԳՆ ներկայացուցիչներ: Բանախոսեցին ՄԻՊ Անահիտ Մանասյանը, Freedom House-ի ներկայացուցիչ Անդրանիկ Շիրինյանը, ԱԺ պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանը և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ծրագրերի ավագ ղեկավար Տաթևիկ Խաչատրյանը:

Այս քննարկումները հնարավորություն են տալիս մասնակիցներին ուղղել իրենց հարցերը ոլորտի պատասխանատուներին և համատեղ վերլուծել խնդիրները:



ՃԱՄԲԱՐ

«Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի հետ համատեղ Ջերմուկում անցկացրեց քառօրյա աշխատարան-ճամբար՝ երիտասարդների շրջանում արտաքին քաղաքական դիսկուրսի խթանման, իրազեկվածության և ներգրավվածության բարձրացման նպատակով:

40 ակտիվ երիտասարդներ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից հնարավորություն ունեցան ծանոթանալու ՀՀ արտաքին քաղաքականության պատմությանը, արդի մարտահրավերներին և դրանց հաղթահարման հնարավորություններին, ինչպես նաև արտաքին քաղաքականության շուրջ մանիպուլյացիաներին և ապատեղեկատվությանը: Բանախոսությամբ հանդես եկան ոլորտի լավագույն փորձագետները և ԵՄ դիտորդական առաքելության ներկայացուցիչներ:

Աշխատարանի ընթացքում երիտասարդները ստացան «Ռեստարտ» հիմնադրամի մենթորական աջակցությունը՝ մշակելու համայնքային ծրագրեր՝ միտված արտաքին քաղաքականության շուրջ քննարկումներում երիտասարդների ներգրավվածության խթանմանը:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

2024 թվականի ընթացքում կազմակերպությունը մշտադիտարկել է վարչապետի հրաժարականը պահանջող հանրահավաքները: Հաշվարկվել է հանրահավաքների մասնակիցների թիվը՝ կանխելու դրանց շուրջ հնարավոր մանիպուլյացիաներն ու շահարկումները:

Տարվա ընթացքում դրոնային նկարահանումների միջոցով փաստագրվել է 10 հանրահավաք, այդ թվում՝ Վրաստանում՝ Թբիլիսիում, որտեղ ընդդիմությունը հանդես էր գալիս խորհրդարանական ընտրությունների արդյունքների դեմ:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» 2024 թվականի ընթացքում շարունակեց իրականացնել հետազոտական աշխատանքներ և դրանց հիման վրա պատրաստել վերլուծական հոդվածներ՝ արտաքին քաղաքականության, տնտեսության, անվտանգության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և այլ հարցերի վերաբերյալ: Տարվա ընթացքում հրապարակվել է 16 վերլուծական հոդված:

Բացի դրանից, պատրաստվել է 17 անիմացիոն տեսանյութ՝ արտաքին քաղաքականության, տարածաշրջանային անվտանգության, Ռուսաստանի և Իրանի դերակատարության, ինչպես նաև բարեփոխումների վերաբերյալ: Վերլուծական հոդվածներն ունեցել են յուրաքանչյուրը միջինում շուրջ 30,000 դիտում, իսկ տեսանյութերը՝ ավելի քան 400,000 դիտում, ինչը վկայում է, որ դրանք հետաքրքրական են և նպաստում են թեմայի շուրջ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:



• Հանրային իրազեկում և իրավագիտակցության բարձրացում

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» հրապարակել է տեսանյութեր՝ ուղղված հանրության իրավագիտակցության բարձրացմանը և իրավունքների պաշտպանությանը:

Դրանցում ներկայացված է՝

- ինպես դիմել ոստիկանություն,
- ինչ անել, եթե ոստիկանության բաժնում ենթարկվել եք բռնության,
- ինչ անել, եթե Ձեզնից կաշառք են ուզում,
- ինչու է կարևոր կոռուպցիայի դեմ պայքարը,
- ինչ դրսևորումներ է ունենում կոռուպցիան:
- Լայնորեն տարածվելով սոցիալական հարթակներում՝ տեսանյութերը հավաքեցին ավելի քան 3.4 միլիոն դիտում:

2024 թվականին «Ում դիմել» կայքում ավելացվել են նոր բաժիններ՝

- «Ի՞նչ անել, եթե ոստիկանության բաժնում ենթարկվել եք բռնության»,
- «Ի՞նչ անել, եթե ներկայացրել եմ հանցագործության մասին հաղորդում, իսկ իրավապահ մարմինն իմ տվյալները փոխանցել է իրավախախտին»,
- «Ի՞նչ անել, եթե ձեզնից կաշառք են ուզում»:

Հիշեցնենք, որ «Ում դիմել» կայքը ստեղծվել է դեռևս 2018 թվականին՝ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով, որտեղ հանրամատչելի լեզվով կարելի է գտնել օգտակար խորհուրդներ, թե ում դիմել և ինչ անել տարատեսակ խնդիրների բախվելու դեպքում:

Կազմակերպությունը 2024 թվականին թողարկեց նաև նոր հաղորդաշար, որը հեռարձակվեց Բուն TV-ի եթերում: «Քաղաքացի-պետություն» հաղորդաշարում քննարկվում էին այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են քաղաքացի-պետություն հարաբերությունները, դրանց կառուցման սկզբունքները և արդյունավետության բարձրացման ուղիները: Տարվա ընթացքում հեռարձակվեց 30 հաղորդում:

- ## Սոցիոլոգիական հետազոտություն

2024 թվականի մարտին կազմակերպությունը ներկայացրեց իրավապահ համակարգի գործունեության ընկալման և վերաբերմունքի, ՀՀ արտաքին քաղաքականության և ՀՀ բնակչության մեդիագրագիտության ուսումնասիրության արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է «Հասարակական հետազոտությունների առաջատար խմբի» կողմից և պարունակում է համեմատական տվյալներ՝ 2019 թվականին կատարված նմանատիպ ուսումնասիրությունից:

Հետազոտությունը, որն իրականացրել է «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբը»՝ հարցման միջոցով, ներառում է համեմատական տվյալներ 2019 թվականին կատարված նույնաբնույթ ուսումնասիրությունից: Հարցմանը մասնակցել է Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից 1200 քաղաքացի:

Արդյունքները ցույց տվեցին մի շարք խնդրահարույց հարցեր. մասնավորապես՝ իրավապահ մարմինների նկատմամբ հասարակության վստահության պակաս և դրանց հետ համագործակցության պատրաստակամության նվազ մակարդակ: Արտաքին քաղաքականության մասով հետաքրքրական է երկրի ապագայի վերաբերյալ հասարակության կարծիքի փոփոխությունը. հարցվածների 41%-ը կարծում է, որ իրավիճակը գնալով վատանում է: Եթե 2019 թվականին հարցվածների 72%-ը Ռուսաստանին ընկալում էր որպես բարեկամ երկիր, ապա 2024 թվականին այդպես է կարծում ընդամենը 21%-ը:

Ինչ վերաբերում է մեդիագրագիտությանը, ապա հետազոտության արդյունքները վկայում են, որ տեղեկությունների հավաստիության ստուգման, գրագետ սպառման և տարածման համաթիվը մեծացել է, իսկ տեղեկությունների որոնման ունակության մակարդակը՝ նվազել:



ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» կազմակերպեց հնգամսյա ուսումնառություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված լրագրողների համար՝ զարգացնելու նրանց կարողությունները փաստերի-ստուգման լրագրության ոլորտում:

Ուսումնառություն անցնող լրագրողները ձեռք բերեցին թե՛ տեսական, թե՛ գործնական գիտելիքներ: Նրանց համար կազմակերպվեցին ոլորտային մասնագետների կողմից անցկացվող թվով 10 դասընթաց՝ հետևյալ թեմաներով.

- բաց աղբյուրների միջոցով անձանց որոնում և նույնականացման հմտություններ,
- ԱԹՍ-ների ընդհանուր սկզբունքներ և գործնական պարապմունք-թռիչք,
- բաց աղբյուրների ուսումնասիրություն և անհրաժեշտ տեղեկություններ որոնելու հմտություններ,
- սոցիալական ցանցերում ֆեյք օգտատերերի, ֆեյք ֆաբրիկաների բացահայտում,
- լուսանկարչության հիմունքներ և բազային հմտություններ,
- վիդեոմոնտաժի հմտություններ,
- քարտեզներ, տեղորոշում և օդագնացության համակարգեր,
- լուսանկարների և տեսանյութերի ստուգման գործիքներ,
- արհեստական բանականության դերը ժամանակակից մեդիա արտադրական ցիկլում,
- հիմնական հմտություններն ու առաջնահերթությունները՝ փաստերի ստուգման գործում:

Ուսումնառություն անցնող լրագրողները կիրառեցին ձեռք բերված գիտելիքները՝ պատրաստելով շուրջ 50 փաստերի ստուգման հոդվածներ և հետաքննություններ «Փաստերի ստուգման հարթակի» (FIP.am) համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունը գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համատեղ խորը անհանգստություն է հայտնել 2024 թվականի հունիսի 12-ին Երևանի Բաղրամյան պողոտայում ցուցարար քաղաքացիների և ոստիկանների միջև տեղի ունեցած բախման առթիվ, որի արդյունքում շուրջ 100 հոգի ստացել էին մարմնական վնասվածքներ:

Վերլուծելով բախմանը նախորդած ժամանակահատվածում ցույցերը կազմակերպած գործիչների հռետորաբանությունը, գործողությունները, ելույթները և կոչերը, ինչպես նաև բախման տեսագրությունները և առկա օբյեկտիվ այլ տվյալները՝ կազմակերպություններն արձանագրեցին, որ ոստիկանությունը չի ձեռնարկել բոլոր պատշաճ քայլերը քաղաքացիների հետ բախումից խուսափելու համար, իսկ բախումից հետո ոստիկանությունը հատել է համաչափության սահմանը և լուսաձայնային նռնակների կիրառման սահմանափակումները, որի հետևանքով խախտվել են մի քանի տասնյակ անձանց հիմնարար իրավունքները:

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՉԱՓՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Վարշավայում անցկացվող ամենամյա ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Մարդկային չափողականության կոնֆերանսի ընթացքում կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանն հոկտեմբերի 3-ի իր ելույթում անդրադարձավ Ադրբեջանի վարած հայատյացության քաղաքականությանը և Հայաստանի դեմ նոր ագրեսիա սկսելու նախապատրաստմանը՝ առանձնահատուկ շեշտելով Ադրբեջանի կողմից «Արևմտյան Ադրբեջանի» կեղծ թեզի շահարկումը: Դանիել Իոաննիսյանը, հակադարձելով ադրբեջանցի ռազմագերիների նկատմամբ հայկական կողմի, իբր, վատ վերաբերմունքի մասին պնդումներին, ի պատասխան, հիշեցրեց, որ հայկական գերության մեջ ոչ մի ադրբեջանցի գերի չի մահացել, այնինչ ադրբեջանցիները մահապատժի են ենթարկել ոչ միայն զինաթափված հայ զինվորականների, այլ նաև քաղաքացիական անձանց:

Հոկտեմբերի 4-ի ելույթում, Դանիել Իոաննիսյանն անդրադարձավ Հայաստանի դատական համակարգի խնդիրներին՝ մատնանշելով, հատկապես, կադրային վիճահարույց նշանակումները:

Հոկտեմբերի 8-ի ելույթում, Դանիել Իոաննիսյանն անդրադարձավ Ադրբեջանում ռասիզմի դրսևորումներին և Ադրբեջանի իշխանությունների հայատյաց հայտարարություններին:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2024

	2024թ. ֆինանսական միջոցները՝ ըստ աղբյուրների		*USD*
1	Ժողովրդավարության ազգային հիմնադրամ (Վաշինգտոն)	*Բալանս*	**22,931**
		Եկամուտ	**158,000**
2	Միացյալ Թագավորության կառավարություն (Լոնդոն)	*Բալանս*	**38,178**
		Եկամուտ	**59,194**
3	Հայաստանում ԱՄՆ դեսպանություն (Երևան)	*Բալանս*	**1,403**
		Եկամուտ	**27,005**
4	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ (Երևան)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**51,028**
5	Ազատության տուն (Վաշինգտոն)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**41,631**
6	Ինտերնյուս նեթվորք (Երևան)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**20,860**
7	Բաց տեղեկատվության համագործակցություն (Լոնդոն)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**14,180**
8	Հանրային լրագրության ակումբ (Երևան)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**10,888**
9	Ազատության տուն (Վաշինգտոն)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**9,650**
10	Եվրոպական Միության պատվիրակություն Հայաստանում (Երևան)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**10,083**
11	Հայաստանում Ֆրանսիայի դեսպանություն (Երևան)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**12,892**
12	Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամ (Թբիլիսի) , Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն (Երևան)	*Բալանս*	**0**
		Եկամուտ	**1,578**
	Ընդամենը		**479,501**

	2024թ. ծախսերը՝ ըստ իրականացված ծրագրերի		***USD***
1	Արտաքին քաղաքականության և ժողովրդավարական բարեփոխումների շուրջ հանրային քննարկումների խթանում	*Ծախսեր*	**158,505**
2	Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում	*Ծախսեր*	**97,372**
3	Պայքար կոռուպցիայի և մարդու իրավունքների խախտումների դեմ՝ քաղաքացիների ներգրավման միջոցով	*Ծախսեր*	**28,408**
4	Ապատեղեկատվության դեմ պայքար՝ ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների, խաղաղության ու անվտանգության և հանրային մասնակցության ոլորտներում	*Ծախսեր*	**44,452**
5	Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում	*Ծախսեր*	**30,706**
6	Ապատեղեկատվության և հակաժողովրդավարական քարոզչության տարածման նվազեցում և հիմնական քարոզչական թեզերի բացահայտում	*Ծախսեր*	**20,860**
7	Արտաքին քաղաքական դիսկուրսի ակտիվացում՝ տեղեկացվածության և երիտասարդների մասնակցության խթանման միջոցով	*Ծախսեր*	**14,180**
8	Լեռնային Ղարաբաղից տեղահանված լրագրողների մեդիա կարողությունների զարգացում	*Ծախսեր*	**10,888**
9	Ժողովրդավարության հայկական ֆորում 2024	*Ծախսեր*	**9,650**
10	Ժողովրդավարության հայկական ֆորում 2024	*Ծախսեր*	**10,083**
11	Ապատեղեկատվության դեմ պայքար՝ տեղեկատվական հոսքի մշտադիտարկման, փաստերի ստուգման և հրապարակումների միջոցով	*Ծախսեր*	**8,324**
12	«Մի րոպե կարևորի մասին» կարճ հոլովակներ	*Ծախսեր*	**1,578**
	Ընդամենը		**435,008**